

Համարը N 1910-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2007.02.07/9(533)
Հոդ.185

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 17.02.2007

Ընդունման ամսաթիվը 23.11.2006
Ստորագրման ամսաթիվը 16.01.2007
Վավերացման ամսաթիվը 22.01.2007
Ուժը կորցնելու ամսաթիվը

- ☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ
- ☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՐԳԵՐԸ, ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԶԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
22 հունվարի 2007 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2006 թվականի N 1910-Ն

«ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՐԳԵՐԸ, ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԶԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության, 2-րդ մասի, 3-րդ մասի երկրորդ պարբերության, 9-րդ հոդվածի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի չորրորդ պարբերության, 4-րդ մասի, 6-րդ մասի, 12-րդ հոդվածի, 20-րդ հոդվածի 3-րդ մասի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 24-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության և 25-րդ հոդվածի պահանջների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

1. Սահմանել՝

ա) թաղման և դիակիզման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

գ) գերեզմանի վկայականի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

դ) գերեզմանատների շահագործման ընդհանուր կանոնները՝ համաձայն N 4 հավելվածի.

ե) գերեզմանատներից և դիակիզարաններից օգտվելու կանոնները՝ համաձայն N 5 հավելվածի.

զ) հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման կարգը՝ համաձայն N 6 հավելվածի.

է) համայնքային գերեզմանատներում վճարովի հիմունքներով հողատարածքի հատկացման կարգը՝ համաձայն N 7 հավելվածի.

ը) վերահուղարկավորման կարգը՝ համաձայն N 8 հավելվածի:

(1-ին կետը խմբ. 11.02.16 N 244-Ն)

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ վեցամսյա ժամկետում մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել՝

ա) սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման, գերեզմանատների վնասագերծման և տեղափոխման կարգը,

բ) վրահուղարկավորման կարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2007 թ. հունվարի 16
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹԱՂՄԱՆ ԵՎ ԴԻԱԿԻԶՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) կամ աճյունասափորը գերեզմանատան սահմաններում տրամադրված գերեզմանատեղում հողին հանձնելու (թաղելու), հուշապատի մեջ տեղադրելու կամ դիակիզելու հետ կապված գործողությունները:

(1-ին կետը լրաց. 11.02.16 N 244-Ն)

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

գերեզմանատան տնօրինություն՝ համայնքի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի, կամ համայնքի ղեկավարի (Երևանում՝ Երևանի քաղաքապետի) կողմից ստեղծված հուղարկավորության կազմակերպման համար օրենքով նախատեսված ոչ առևտրային կազմակերպություն, իսկ

պետական գերեզմանատների դեպքում՝ լիազորված պետական մարմինը, իսկ մասնավոր գերեզմանատների դեպքում՝ գերեզմանատունը շահագործողը կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այլ անձը:

դիակլիզարան՝ մահացածի մարմինը դիակլիզելու համար հատուկ վառարաններով, հանգուցյալի հետ հրաժեշտի ծիսակատարման սրահով, դիակլիզի ժամանակավոր պահման սառնարանային համալիրով կահավորված հատուկ կառույց:

աճյունասափոր՝ չքայքայվող նյութից (մետաղյա կամ պլաստիկ) պատրաստված կափարիչի հերմետիկությունն ապահովող սրվակ (տրամագիծը՝ 0,15 մ, երկարությունը՝ 0,20 մ), որտեղ տեղադրվում է մահացածի մարմնի դիակլիզումից հետո ստացված մոխիրը:

հուշապատ՝ աճյունասափորների տեղադրման համար հատուկ կառուցված պատ:

(2-րդ կետը լրաց 11.02.16 N 244-Ն)

3. Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորությունն իրականացվում է մահվան վկայականի հիման վրա:

4. (կետն ուժը կորցրել է 11.02.16 N 244-Ն)

5. Մահացածի հուղարկավորման համար գերեզմանատան, տեղի և տեսակի ընտրության, գերեզմանատեղի տրամադրման հարցերը կարգավորվում են՝ հաշվի առնելով անձի կենդանության ժամանակ իր հուղարկավորության պայմանների վերաբերյալ նրա կամքի գրավոր արտահայտությունը կամ, դրա բացակայության դեպքում, հուղարկավորության կազմակերպումն ստանձնողների ցանկությունը՝ օրենքով սահմանված կարգով:

(5-րդ կետը լրաց 11.02.16 N 244-Ն)

6. Մահացածի մարմինը (աճյունը) հողին հանձնելու համար համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով դիմողի ցանկությամբ մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 2.5 քառ. մետր հողատարածք (2.5 x 1.0 մետր չափսերով), իսկ ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար՝ առավելագույնը 12,5 քառ. մետր հողատարածք:

Աճյունասափորը (մահացածի մարմնի դիակլիզումից հետո) հողին հանձնելու դեպքում համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 1.0 քառ. մետր հողատարածք (1.0 x 1.0 մետր չափսերով), կամ աճյունասափորը տեղադրվում է հուշապատի մեջ:

(6-րդ կետը խմբ 11.02.16 N 244-Ն)

7. Մահացածի հուղարկավորության կազմակերպումն ստանձնողը գերեզմանատան տնօրինությանը ներկայացնում է մահվան վկայականը և առաջարկություն հուղարկավորության տեղի ու տեսակի (հողին հանձնում կամ դիակլիզում) վերաբերյալ:

8. Գերեզմանատան տնօրինությունը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի հետ համատեղ որոշում է հուղարկավորության տեղը, ինչպես նաև օրը և ժամը: Հանգուցյալի թաղումը կատարվում է մահվան պահից ոչ շուտ, քան 24 ժամ հետո:

9. Գերեզմանատան տնօրինությունը մահվան վկայականի հիման վրա համապատասխան գրանցում է կատարում թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանում և հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին տալիս է գերեզմանի վկայական:

10. Ընտանեկան գերեզմանի առկայության դեպքում գերեզմանատեղը հատկացվում է այդ գերեզմանի տարածքում նախկինում տրված գերեզմանի վկայականի հիման վրա, որում կատարվում են համապատասխան գրանցումներ: Նշված գերեզմանի վկայականի բացակայության դեպքում

հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին տրվում է գերեզմանի նոր վկայական:

11. Նոր գերեզմանը հատկացվում է օրենքով սահմանված կարգով և չափերով՝ գերեզմանատան հողերի օգտագործման հաստատված հատակագծով (սխեմայով) նախատեսված հերթականությամբ: Գերեզմանատան տնօրինության ներկայացուցիչը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի հետ համատեղ տեղում սահմանապայմաններով նշում է գերեզմանի սահմանները:

12. Գերեզմանատան տնօրինությունը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին ներկայացնում է իր կողմից կատարվող՝ մահացածին հողին հանձնելու, դիակիզման նախապատրաստական աշխատանքների (գերեզմանի փորում, թաղման կազմակերպում, գերեզմանի կարգավորում, դիատար և այլ ավտոմեքենաների տրամադրում, դիակիզում) և մատուցվող այլ վճարովի ծառայությունների ցանկը: Նշված ծառայություններից օգտվելը կամավոր է:

13. Սույն կարգի 12-րդ կետում նշված՝ մատուցվող վճարովի ծառայությունների ցանկը հաստատում է համայնքի ղեկավարը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը), իսկ մասնավոր գերեզմանատան դեպքում՝ այդ գերեզմանատունը շահագործող անձը:

(13-րդ կետը լրաց 11.02.16 N 244-Ն)

14. Աճյունասափորը հանձնվում է հողին կամ տեղադրվում է հուշապատի մեջ՝ դիակիզարանի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

(14-րդ կետը լրաց, փոփ. 11.02.16 N 244-Ն)

15. Մահացածի հետ հրաժեշտի և հուղարկավորության ծիսակատարությունը կարող է իրականացվել ազգային և կրոնական ավանդույթի համաձայն:

(15-րդ կետը փոփ. 11.02.16 N 244-Ն)

16. Հուղարկավորության ավարտից հետո գերեզմանատան տնօրինությունը գերեզմանի վրա տեղադրում է մետաղյա ցուցանակ, իսկ աճյունասափորը հուշապատի մեջ տեղադրելու դեպքում փակվում է սալաքարով, որոնց վրա նշվում են հանգուցյալի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան ու մահվան տարեթվերը և գերեզմանատեղի (աճյունասափորի) հաշվառման համարը: Մետաղյա ցուցատախտակը և աճյունասափորի սալաքարը պատրաստվում և տեղադրվում են գերեզմանատան տնօրինության միջոցների հաշվին:

17. Հուղարկավորությունը դիակիզման միջոցով կամավոր է: Այն իրականացնելու համար հուղարկավորության կազմակերպումն ստանձնողը գրավոր դիմում է դիակիզարանի տնօրինությանը՝ ներկայացնելով մահվան վկայականը:

18. Դիակիզարանի պատասխանատու անձը դիակիզման մատյանում կատարում է դիակիզման օրվա ու ժամի վերաբերյալ գրանցում և հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի պատվերով կազմակերպում է մահացածի մարմնի ընդունումը, հրաժեշտի ծիսակատարությունն ու դիակիզումը: Աճյունասափորը հանձնվում է հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին կամ, նրա բացակայության դեպքում, հարազատներից որևէ մեկին՝ դիակիզումից հետո մեկ օրվա ընթացքում:

18.1. Մասնավոր գերեզմանատներում գերեզմանատան շահագործողն ինքնուրույն է կազմակերպում հուղարկավորության ծառայությունների մատուցումը՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա: Հուղարկավորության հետ կապված ծառայությունների ամբողջական ծավալը, այդ թվում՝ նաև հուղարկավորությունը դիակիզման միջոցով իրականացնելը որոշվում է պայմանագրով՝ կողմերի նախնական համաձայնությամբ:

(18.1-ին կետը լրաց 11.02.16 N 244-Ն)

19. Մահացածի հարազատների, ազգականների և այլ անձանց կողմից հուղարկավորության կազմակերպումից հրաժարվելու կամ, նրանց բացակայության դեպքում, մահացածի հուղարկավորությունն ստանձնում է քաղաքացու վերջին մշտական բնակության վայրի համայնքի ղեկավարը:

20. Ազատագրկման վայրերում, բուժհաստատություններում, ծերանոցներում և մանկատներում մահացած անձանց հուղարկավորությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

21. Ինքնությունը չպարզված անձի հուղարկավորությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինների համաձայնությամբ՝ քաղաքացիական գերեզմանատներում հատուկ հատկացված տեղերում: Ինքնությունը չպարզված անձի դիակիզումն արգելվում է՝ բացառությամբ սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքերի:

22. Հուղարկավորությունը կազմակերպած անձի պահանջով գերեզմանատան տնօրինությունն անվճար տալիս է տեղեկանք մահացածին Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորելու մասին, որտեղ նշվում է՝

- 1) մահացածի անունը, հայրանունը, ազգանունը.
- 2) մահացածի ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և մահվան օրը, ամիսը, տարեթիվը.
- 3) մահվան վկայականի համարը.
- 4) տվյալ գերեզմանատան թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանում գրանցման հերթական համարը, օրը, ամիսը, տարեթիվը.
- 5) տեղեկանքի հերթական համարը, տեղեկանքը տրամադրելու օրը, ամիսը, տարեթիվը: Տեղեկանքը տրվում է այդպիսի պահանջ (դիմում) ներկայացնելուց հետո՝ անմիջապես:

(22-րդ կետը լրաց 15.11.12 N 1445-Ն)

(հավելվածը լրաց 15.11.12 N 1445-Ն, լրաց, փոփ, խմբ 11.02.16 N 244-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐՈՒՄ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ
ՀՈՒՂԱՐԿՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ
(վերնագիրը խմբ 11.02.16 N 244-Ն)

1. Սույն կարգով սահմանվում են մահացած անձանց հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի անվամբ գերեզմանատներում գերեզմանատեղերի (գերեզմանների) հաշվառման և հուղարկավորությունների կարգը:

(1-ին կետը փոփ 11.02.16 N 244-Ն)

2. Գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառումը և հուղարկավորությունների գրանցումն իրականացվում է գերեզմանատներում թաղումների և գերեզմանատեղերի հաշվառման ու հուղարկավորությունների գրանցման յուրաքանչյուրը իր մասով, դրա համար նախատեսված մատյանում համապատասխան գրառում կատարելու միջոցով:

Յուրաքանչյուր գերեզմանատան համար համապատասխան մատյանները վարում են գերեզմանատների կառավարիչները կամ նրանց կողմից լիազորված պատասխանատու անձը (կազմակերպությունը):

(2-րդ կետը խմբ. 11.02.16 N 244-Ն)

2.1. Գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյանների տիպային ձևերը հաստատվում են պետական լիազորված մարմնի կողմից:

(2.1-ին կետը լրաց. 11.02.16 N 244-Ն)

3. Մատյանի թերթերը համարակալվում են, կարվում և կնքվում սույն կարգի 2-րդ կետում նշված մարմինների կողմից:

4. Մատյանում գրանցվում են՝

ա) գրանցման հերթական համարը, տարեթիվը, ամսաթիվը, ամիսը,

բ) մահացածի անունը, հայրանունը, ազգանունը,

գ) մահացածի ծննդյան և մահվան տարեթիվերը, ամսաթիվերը և ամիսները,

դ) մահվան վկայականի համարը, մահը գրանցող մարմնի անվանումը, գրանցման տարեթիվը, ամսաթիվը, ամիսը,

ե) մահացածի վերջին բնակության վայրը,

զ) գերեզմանի վկայականի համարը, գերեզմանի տեղը (ծառուղի, հատված, շարք), իսկ եթե հուղարկավորությունն իրականացվելու է աճյունասափորը հուշապատի մեջ տեղադրելու արարողությամբ, ապա նշվում է հուշապատի գտնվելու տեղը և աճյունասափորը տեղադրելու մոտավոր տեղը, իսկ այդ տեղերի համարակալված լինելու դեպքում՝ նաև համապատասխան համարը,

է) գերեզմանի մակերեսը (քառ. մետր)՝ ընդամենը, այդ թվում՝ վճարովի,

ը) հուղարկավորության կազմակերպումն ստանձնած անձի անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի համարը և մահացածի հետ ազգակցական կապը,

թ) տվյալ գերեզմանում թաղվածների թիվը,

ժ) այլ նշումներ:

(4-րդ կետը լրաց. 11.02.16 N 244-Ն)

5. Մատյանի համապատասխան սյունակներում ստորագրում են գերեզմանի վկայականն ստացողը և գրանցում կատարող պատասխանատու անձը:

6. Մատյանում ուղղումներ և ջնջումներ կատարելն արգելվում է: Անհրաժեշտության դեպքում՝ կատարված ուղղումները կամ ջնջումները վավերացվում են գրանցման մատյանը վարող պատասխանատու անձի ստորագրությամբ:

7. Մատյանները պահվում են անժամկետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Մ Ա Տ Յ Ա Ն

Գ Ե Ր Ե Ջ Մ Ա Ն Ա Տ Ն Ե Ր ՈՒ Մ Գ Ե Ր Ե Ջ Մ Ա Ն Ա Տ Ե Ղ Ե Ր Ի Հ Ա Շ Վ Ա Ռ Մ Ա Ն Ե Վ Թ Ա Ղ ՈՒ Մ Ն Ե Ր Ի Գ Ր Ա Ն Ց Մ Ա Ն

Գրանցման հերթական համարը, տարեթիվը, ամսաթիվը, ամիսը	Մահացածի անունը, հայրանունը, ազգանունը	Մահացածի ծննդյան և մահվան տարեթիվերը, ամսաթիվերը, ամիսները	Մահվան վկայականի համարը, գրանցող մարմնի անվանումը, գրանցման տարեթիվը, ամսաթիվը, ամիսը	Մահացածի վերջին բնակության վայրը	Գերեզմանի վկայականի համարը, ծառուղի, հատված, շարք	Գերեզմանի մակերեսը (քառ. մ)		Հուղարկավորության կազմակերպումն ստանձնող անձը, ազգակցական կապը		Տվյալ գերեզմանում թաղվածների թիվը	Այլ նշումներ	Գրանցում կատարող պատասխանատու անձի ստորագրությունը
						ընդամենը	այդ թվում՝ վճարովի	անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի տվյալները, ազգակցական կապը	ստորագրությունը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13

(հավելվածը խմբ., փուփ., լրաց 11.02.16 N 244-Ն)

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման

Գ Ե Ր Ե Ջ Մ Ա Ն Ի Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն Ն _____

Գերեզմանատուն _____ ,
 ծառուղի _____, հատված _____, շարք _____ ,
 Հողատարածքի չափերը՝ _____ մ,
 Հողատարածքի մակերեսը՝ ընդամենը՝ _____ քառ. մ,
 այդ թվում՝ վճարովի _____ քառ. մ,
 Հուշապատ _____
 Հուղարկավորությունն ստանձնած անձ _____
 (անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրային տվյալները)
 _____ ,
 Ազգակցական կապը _____
 _____ 200 թ.

ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

NN ը/կ	Թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանում գրանցման համարը տարեթիվը, ամսաթիվը, ամիսը	Հանգուցյալի անունը, հայրանունը, ազգանունը	Ծննդյան տարեթիվը, ամսաթիվը, ամիսը	Մահվան տարեթիվը, ամսաթիվը, ամիսը	Մահվան վկայականի համարը	Հուղարկավորության տեսակը (հողին հանձնում, դիակլիզում)	Գրանցում կատարող պատասխանատու անձի ստորագրությունը

Գերեզմանատան տնօրեն

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման

Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ր Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Գ Ե Ր Ե Զ Մ Ա Ն Ա Տ Ն Ե Ր Ի Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն

1. Սույն ընդհանուր կանոններով սահմանվում են գերեզմանատների բարեկարգման,

պահպանման ու շահագործման (այսուհետ՝ շահագործում) ընդհանուր կանոնները:

2. Գերեզմանատները շահագործվում են համապատասխան գերեզմանատան կառավարիչների միջոցների հաշվին:

(2-րդ կետը փոփ. 11.02.16 N 244-Ն)

3. Գերեզմանատների շահագործումն ապահովում է համայնքային գերեզմանատների դեպքում՝ համայնքի ղեկավարը, (Երևանում՝ Երևանի քաղաքապետը) կամ նրա կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպությունը, իսկ մասնավոր գերեզմանատների դեպքում՝ համապատասխան գերեզմանատան կառավարիչը:

(3-րդ կետը լրաց 11.02.16 N 244-Ն)

4. Պետական լիազոր մարմինը գերեզմանատների ու դիակլիզարանների շահագործման և հուղարկավորությունների կազմակերպման բնագավառում իրականացնում է օրենքով իրեն վերապահված լիազորությունները:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ հասարակական նշանակություն ունեցող գերեզմանատները (Եռաբլուր, Կոմիտասի անվան պանթեոն) և դիակլիզարանները պահպանվում են բյուջետային հատկացումների հաշվին՝ հաստատված տարեկան նախահաշվին համապատասխան:

6. Գերեզմանատները (դիակլիզարանները) կազմավորվում են տեղական ինքնակառավարման մարմինների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) որոշմամբ՝ ըստ գտնվելու բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծերի, հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների հիման վրա՝ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխան:

6.1. Մասնավոր գերեզմանատները կազմավորվում են հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների հիման վրա՝ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի վրա՝ միաժամանակ պահպանելով քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերի պահանջները:

(6.1-ին կետը լրաց 11.02.16 N 244-Ն)

6.2. Մասնավոր գերեզմանատները կազմակերպվում են իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից՝ սեփականության կամ կառուցապատման իրավունքով իրենց տրամադրված նվազագույնը 3 հեկտար տարածքով հողամասերում՝ մասնավոր գերեզմանատների շահագործման գործունեություն իրականացնելու համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվության հիման վրա:

(6.2-րդ կետը լրաց 11.02.16 N 244-Ն)

7. Գերեզմանատներն ու դիակլիզարանները տեղադրվում են բնակելի տներից, դպրոցներից, նախադպրոցական, առողջապահական և հասարակական այլ շենքերից ու հանգստի գոտիներից առնվազն 300 մետր հեռավորության վրա:

8. Համայնքներում նոր գերեզմանատների կազմակերպման, գործող գերեզմանատների ընդլայնման համար հողատարածքները տրամադրվում և նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Գերեզմանատները և դիակլիզարանները նախագծվում են դրանց համար հատկացված տարածքների ինժեներաերկրաբանական հետազոտությունների նյութերի փորձաքննության դրական եզրակացության հիման վրա:

10. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար համայնքի ղեկավարը (Երևանում՝ Երևանի

քաղաքապետը) հաստատում է գերեզմանատների հողերի օգտագործման հատակագիծը (սխեման), որում նախատեսվում են՝

ա) գերեզմանատան զբաղեցրած հողատարածքի սահմանները,

բ) գերեզմանատան սանիտարապաշտպանիչ գոտին՝ պարսպից (ցանկապատից) առնվազն 10 մետր հեռավորությամբ,

գ) օրենքով սահմանված չափերով գերեզմանների հատկացման համար տեղամասերը (ծառուղիները, հատվածները, շարքերը) և դրանց օգտագործման հերթականությունը՝ առանձնացնելով ընտանեկան գերեզմանների, անհատական գերեզմանատեղերի (մեկ անձի) և պատմամշակութային տեղամասերը,

դ) աճյունասափորների տեղադրման համար հուշապատերը,

ե) ճանապարհների ու շավիղների տեղադրությունը, որոնց ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի գերեզմանատան ընդհանուր տարածքի 15 տոկոսը,

զ) կանաչապատման տեղամասերը չպետք է գերազանցեն գերեզմանատան ընդհանուր տարածքի առնվազն 20 տոկոսը,

է) գերեզմանատան շահագործման և գերեզմանատնից օգտվելու համար անհրաժեշտ շինությունները, ենթակառուցվածքները՝ ելնելով տեղական պայմաններից (ավտոկայանատեղ, սգո արարողությունների սրահ, գրասենյակ, սգո պարագաների ու ծաղիկների վաճառքի կետ, գործիքների վարձույթի կետ, ռոռզման համակարգ, խմելու ջրի ծորակ, հասարակական զուգարան, պարիսպ (ցանկապատ):

10.1. Համայնքի ղեկավարը պետական կամ մասնավոր գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերը հաստատելիս սույն հավելվածի 10-րդ կետով նախատեսված «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով սահմանված պահանջների նախատեսման մասով համաձայնեցնում է համապատասխան գերեզմանատները տնօրինող կառավարիչների հետ:

(10.1-ին կետը լրաց 11.02.16 N 244-Ն)

11. Ընտանեկան գերեզմանների սահմանների միջև տարածությունը պետք է լինի առնվազն 0,5 մետր: Ընտանեկան գերեզմաններում գերեզմանատեղերի և անհատական գերեզմանատեղերի միջև տարածությունը պետք է լինի մեկ մետր երկարությամբ ու առնվազն 0,5 մետր լայնությամբ:

12. Գերեզմանահորի խորությունը պետք է լինի առնվազն 1,5 մետր: Գերեզմանահորի հատակն ստորգետնյա ջրերի մակարդակից պետք է առնվազն 2,5 մետր բարձր լինի:

13. Մահացածի աճյունը գերեզմանահորում տեղադրելուց հետո գերեզմանը ծածկվում է 0,5 մետր բարձրությամբ հողաթմբով, որի եզրերը պետք է լինեն գերեզմանահորի չափերից ավելին՝ գերեզմանահորը մակերևութային ջրերի թափանցումից պաշտպանելու նպատակով:

14. Աճյունասափորների հուշապատի բարձրությունը պետք է լինի ոչ ավելի, քան 2,5 մետր, իսկ երկարությունը՝ գերեզմանատան հողերի օգտագործման հատակագծին (սխեմային) համապատասխան: Աճյունասափորները տեղադրվում են հուշապատի խորշերում (տրամագիծը՝ 0,2 մետր, խորությունը՝ 0,25 մետր) երեք հորիզոնական շարքով: Խորշերի միջև տարածությունն ուղղահայաց և հորիզոնական ուղղություններով պետք է լինի առնվազն 1,0 մետր: Յուրաքանչյուր աճյունասափորի համար տեղադրվում է սալաքար՝ 0,5 մ x 0,5 մ չափերով: Հուշապատի համար կարող է օգտագործվել գերեզմանատան պարիսպը:

15. Գերեզմանատան մուտքի մոտ տեղադրվում են գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները:

16. Գերեզմանատան տնօրինությունն ապահովում է գերեզմանատան տարածքի մաքրությունը և կազմակերպում աղբահանությունը:

17. Գերեզմանատան տարածքը պետք է ապահովված լինի մակերևութային ջրերի հեռացման համակարգով:

18. Գերեզմանատան հողատարածքներում, այդ թվում՝ սանիտարապաշտպանիչ գոտում արգելվում են դրանց նպատակային և գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն, ինչպես նաև պտղատու ծառերի ու թփերի տնկումը:

19. Գերեզմանատանը հարակից տարածքներում գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողատարածքները պետք է լինեն գերեզմաններից առնվազն 40 մետր հեռավորության վրա:

20. Գերեզմանատան տարածքում արգելվում է բնակավայրերի խմելու և տնտեսական ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցերի տեղադրումը՝ բացառությամբ գերեզմանատան կարիքների համար տեղադրվողների:

21. Գերեզմանատների տեղափոխման դեպքում չի թույլատրվում դրանց զբաղեցրած հողատարածքներն օգտագործել գյուղատնտեսական նպատակների համար:

(հավելվածը փոփ, լրաց 11.02.16 N 244-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻՑ ԵՎ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ

1. Սույն կանոններով սահմանվում են գերեզմանատներից և դիակիզարաններից օգտվելու կանոնները:

2. Հուղարկավորությունը գերեզմանատներում և դիակիզումը կատարվում են ամեն օր, ժամը 10.00-18.00-ն: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տոնական ոչ աշխատանքային օրերին, որպես կանոն, հուղարկավորություն և դիակիզում չեն իրականացվում:

3. Գերեզմանատներն այցելուների համար բաց են ամեն օր, ժամը 9.00-20.00-ն:

4. Գերեզմանատան տնօրինությանը հուղարկավորություն կատարելու մասին տեղեկացվում է մեկ օր առաջ:

5. Հուղարկավորության կազմակերպումն ստանձնողը (մահացածի հարազատները, մտերիմները) իրավունք ունեն իրենց պատկանող գերեզմանի սահմաններում կատարելու գերեզմանների, գերեզմանատների բարեկարգման և տապանաքարերի, մահարձանների տեղադրման աշխատանքներ՝ համաձայնեցնելով գերեզմանատան տնօրինության հետ: Նշված աշխատանքների կատարումը չպետք է վնաս պատճառի այլ գերեզմանների, գերեզմանատան կառույցների:

Պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:

6. Սույն կանոնների 5-րդ կետում նշված շինարարական աշխատանքները կատարելու համար գերեզմանատան տարածք մեքենաների (մեխանիզմների) մուտքը չի արգելվում:

7. Այցելուները գերեզմանների խնամքի և պահպանման համար անհրաժեշտ պարագաներից ու գործիքներից կարող են օգտվել գերեզմանատանը կից վարձույթի կետից:

8. Այցելուները պարտավոր են չաղտոտել գերեզմանատան տարածքը և պահպանել մաքրություն: Այցելուները պարտավոր են ծիսակատարությունների և գերեզմանների խնամքի արդյունքում առաջացած աղբը տեղադրել գերեզմանատան տնօրինության կողմից հատուկ հատկացված տեղերում: Շինարարական աշխատանքների հետևանքով առաջացած թափոնները հավաքվում և տեղափոխվում են շինարարություն իրականացնող պատասխանատու անձի կողմից:

9. Դիակիզարանից օգտվելու դեպքում մահացածին դիակիզում և աճյունասափորը պատրաստում են ըստ պատվերի ընդունման հերթականության:

10. Գերեզմանների ոչնչացման, պղծման, դրանցում ամրակայված կառույցներին վնաս պատճառելու դեպքում մեղավորները ենթակա են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑԱԾ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՐԱԺԵՇՏԻ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՂՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում է հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման կարգը:

2. Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծվում է հանձնաժողով, որում ընդգրկվում են՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչը (հանձնաժողովի նախագահ),

բ) մարզերում՝ մարզպետը կամ նրա տեղակալը, Երևանում՝ Երևանի քաղաքապետը կամ նրա տեղակալներից մեկը,

գ) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության կապի և տրանսպորտի նախարարության ներկայացուցիչները և այն բնագավառի

(մարմնի, կազմակերպության) ներկայացուցիչը, որտեղ աշխատել (գործել) է հանգուցյալը, դ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ներկայացուցիչը,

ե) հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները (համաձայնությամբ),

զ) մահացածի հարազատներից որևէ մեկը:

(2-րդ կետը լրաց, փոփ. 11.02.16 N 244-Ն, փոփ. 04.08.16 N 806-Ն)

3. Հանձնաժողովը, մահացածի հարազատների կամ նրանց կողմից լիազորված անձի մասնակցությամբ, որոշում է թաղման տեղը, քաղաքացիական հոգեհանգստի արարողության տեղը, օրը, ժամը, թաղման թափոռի շարժման երթուղին, անհրաժեշտ ավտոբուսների և ավտոմեքենաների թիվը, ինչպես նաև ընդունում է որոշում հանգուցյալի հիշատակը հավերժացնելու նպատակով մահարձանի, հուշաքարի, տապանաքարի (այսուհետ՝ մահարձան) տեղադրման և գերեզմանի բարեկարգման վերաբերյալ:

(3-րդ կետը խմբ. 04.09.08 N 999-Ն)

3.1. Մահացածի տան պատին հուշատախտակի տեղադրման հետ կապված գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ սահմանված կարգով:

(3.1-ին կետը լրաց 04.09.08 N 999-Ն)

3.2. Հանձնաժողովը մահացածի հարազատների կամ նրանց կողմից լիազորված անձի նախաձեռնությամբ որոշում է կայացնում հուղարկավորությունը մասնավոր գերեզմանատանն իրականացնելու համար՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր կնքելու միջոցով: Այս դեպքում պայմանագիրը կնքվում է մահացածի հարազատի կամ նրա կողմից լիազորված անձի և մասնավոր գերեզմանատան տնօրինության հետ, իսկ հուղարկավորության ծախսերը, բացառությամբ հուղարկավորության ավարտից հետո առաջացած բոլոր այլ ծախսերի, իրականացվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակների համար նախատեսված միջոցների հաշվին, սակայն ոչ ավելի, քան սույն կարգի 5-րդ կետի «բ» և «գ» ենթակետերով նախատեսված ծախսերը և 6-րդ կետում նշված չափաքանակները:

(3.2-րդ կետը լրաց 11.02.16 N 244-Ն)

4. Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներից որևէ մեկին նշանակում է հուղարկավորության կազմակերպման պատասխանատու անձ (այսուհետ՝ պատասխանատու անձ) և համապատասխան հանձնարարականներ է տալիս հանձնաժողովի անդամներին:

5. Պատասխանատու անձը՝

ա) կազմակերպում է թաղման և դիակիզման կարգով նախատեսված համապատասխան փաստաթղթերի ձևակերպումը,

բ) պատվիրում է դագաղը և սգո արարողության համար անհրաժեշտ պարագաները,

գ) ապահովում է դիատար ավտոմեքենան, ավտոբուսներ ու ավտոմեքենաներ,

դ) նախապատրաստում և ձևավորում է քաղաքացիական հոգեհանգստի արարողության դահլիճը (սրահը),

ե) կազմակերպում է մահացածի աճյունի տեղափոխումը քաղաքացիական հոգեհանգստի արարողության դահլիճ (սրահ), հոգեհանգստի մասնակիցների երթը, պատվո պահակությունը,

զ) թաղումից առնվազն երկու ժամ առաջ ապահովում է գերեզմանահորի պատրաստումը և ձևավորումը, գերեզմանի ու հարակից տարածքի բարեկարգումը,

է) որոշում է մահացածի աճյունը, թաղման թափորի առջնից հանգուցյալի նկարը, շքանշանների ու մեդալների բարձիկները, ծաղկեպսակները տեղափոխող և գերեզմանում մահացածի աճյունը հողին հանձնող անձանց:

Հանձնաժողովի պատասխանատու անձը սույն կետում նշված աշխատանքների իրականացումը կարող է պատվիրել հուղարկավորության ծառայություններ մատուցող ոչ առևտրային կազմակերպությանը:

Մահացածի հարազատների կամ նրանց կողմից լիազորված անձի նախաձեռնությամբ հուղարկավորությունը մասնավոր գերեզմանատանն իրականացնելու համար հանձնաժողովի պատասխանատու անձը մահացածի հարազատների կամ նրանց կողմից լիազորված անձի մասնակցությամբ բանակցություններ է վարում գերեզմանատան տնօրինության հետ և անհրաժեշտ այլ միջոցներ է ձեռնարկում կողմերի միջև պայմանագրի կնքման համար:

(5-րդ կետը լրաց 11.02.16 N 244-Ն)

6. Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների թաղման, գերեզմանի բարեկարգման, մահարձանի պատրաստման և տեղադրման ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակների համար նախատեսված միջոցների հաշվին՝ մասնավորապես՝

ա. հուղարկավորության և թաղման հետ կապված ծախսերը կատարելու համար տրամադրվում է հանձնաժողովի ներկայացրած ծախսերի նախահաշվի հիման վրա հաշվարկված՝ 1700,0 հազ. դրամից ոչ ավելի գումար,

բ. մահարձանի պատրաստման և տեղադրման, ինչպես նաև գերեզմանի բարեկարգման աշխատանքների իրականացման համար տրամադրվում է առաջարկվող էսքիզային տարբերակի (N 1 ձև) հիման վրա հաշվարկված 2277.41 հազ. դրամ հաստատագրված գումար,

գ. **(ենթակետն ուժը կորցրել է 04.08.16 N 806-Ն)**

(6-րդ կետը խմբ. 04.09.08 N 999-Ն, 15.01.15 N 4-Ն, փոփ. 04.08.16 N 806-Ն)

6.1. Գերեզմանի բարեկարգման, մահարձանի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացման համար սույն կարգի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գումարները, ինչպես նաև սույն կարգի 3.2-րդ կետով նախատեսված դեպքում առաջացած ծախսերի գումարները, հանձնաժողովի կողմից որոշման ընդունման պահից 6-ամսյա ժամկետում տրամադրվում են հանգուցյալի հարազատներին (առաջին հերթի ժառանգներին, իսկ նրանց բացակայության դեպքում երկրորդ հերթի ժառանգներին) կամ նրանց կողմից լիազորված անձանց (անձին) կամ հանձնաժողովի կողմից լիազորված կազմակերպությանը՝ որպես աջակցություն:

(6.1-ին կետը լրաց 04.09.08 N 999-Ն, խմբ. 15.01.15 N 4-Ն, լրաց 11.02.16 N 244-Ն, փոփ. 04.08.16 N 806-Ն)

6.2. Գերեզմանի բարեկարգման, մահարձանի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացման համար հաստատագրված գումարը տվյալ պահին գործող գների և համապատասխանեցնելու համար կիրառվում է լիազոր մարմնի կողմից սահմանված կապիտալ ներդրումների միջինացված ինդեքսը:

(6.2-րդ կետը լրաց 04.09.08 N 999-Ն, փոփ. 04.08.16 N 806-Ն)

7. Մահացածի հարազատների ցանկությամբ՝ սեփական միջոցներով կարող են կատարվել թաղման և դիակիզման կարգին չհակասող լրացուցիչ արարողություններ՝ համաձայնեցնելով հանձնաժողովի պատասխանատու անձի հետ:

8. Հոգեհանգստի դահլիճում (սրահում) պատվո պահակները կանգնում են մահացածի աճյունի չորս անկյունում՝ դեմքով դեպի դագաղը:

9. Քաղաքացիական հոգեհանգստի ավարտից հետո դուրս է բերվում մահացածի նկարը, շքանշանների ու մեդալների բարձիկները, դագաղի կափարիչը, դագաղը և դրվում դիատարի վրա, ու թաղման թափորը շարժվում է դեպի գերեզմանատուն՝ հետևյալ հերթականությամբ՝

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության ավտոմեքենան,

մահացածի նկարը, շքանշանների ու մեդալների բարձիկները և ծաղկեպսակները տանող ավտոմեքենան,

դիատար ավտոմեքենան,

մահացածի հարազատների ավտոմեքենաները,

նվազախմբի ավտոմեքենան,

շտապօգնության մեքենան,

թաղման մասնակիցներին տեղափոխող (այդ թվում՝ անձնական օգտագործման)

ավտոմեքենաները:

10. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ներկայացուցիչը կազմակերպում է թաղման թափորի երթը և ապահովում հրաժեշտի արարողության ու գերեզմանատեղի անվտանգությունը:

11. Հանձնաժողովի պատասխանատու անձը գերեզմանատանը կազմակերպում է թաղման միտինգը:

12. Մահացածի աճյունը հողին հանձնելու արարողությունը, հարազատների ցանկությամբ, կարող է կազմակերպվել ըստ ազգային և կրոնական ավանդույթների:

13. Պատասխանատու անձի կողմից որոշված անձինք ապահովում են գերեզմանահորում մահացածի աճյունի տեղադրումը, գերեզմանաթմբի ձևավորումը, մահացածի նկարի տեղադրումը և գերեզմանի հաշվառման ցուցանակի ամրացումը:

14. Թաղման արարողությունն ավարտվում է՝ ցավակցություն արտահայտելով մահացածի հարազատներին ու մտերիմներին:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան
[Ձև N 1](#)

ՄԱՀԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՍՔԻԶՍՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ
(ձևը լրաց 04.09.08 N 999- Ն)

[Ձև N 2](#)

ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ԷՍՔԻԶԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ
(ձևը հանվել է 04.08.16 N 806-Ն)

(հավելվածը խմբ., լրաց 04.09.08 N 999-Ն, խմբ. 15.01.15 N 4-Ն, լրաց, փոփ. 11.02.16 N 244-Ն, փոփ. 04.08.16 N 806-Ն)

Հավելված N 7
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐՈՒՄ ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ
ՀԱՏԿԱՑՄԱՆ**
(վերնագիրը խմբ. 11.02.16 N 244-Ն)

1. Սույն կարգով սահմանվում են համայնքային գերեզմանատներում ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար, բացի օրենքով նախատեսված՝ անվճար հիմունքներով տրամադրվող հողատարածքից, վճարովի հիմունքներով լրացուցիչ տարածք տրամադրելու հետ կապված գործընթացները:

(1-ին կետը լրաց 11.02.16 N 244-Ն)

2. Ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար վճարովի տարածք հատկացվում է չորսից ավելի անդամ ունեցող ընտանիքներին՝ միայն որպես գերեզմանատեղ օգտագործելու իրավունքով: Վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի առավելագույն չափը սահմանվում է 6.0 քառ. մետր:

(2-րդ կետը փոփ. 11.02.16 N 244-Ն)

3. Վճարովի հողատարածքը հատկացվում է բաց գերեզմանատներում հերթական թաղում իրականացնելու ժամանակ գոյություն ունեցող գերեզմանին կից ազատ տարածքի առկայության դեպքում և նոր ընտանեկան գերեզման հատկացնելու դեպքում՝ ըստ գերեզմանատան հողերի օգտագործման հաստատված հատակագծի (սխեմայի) և թաղումների հերթականության:

4. Արգելվում է վճարովի հողատարածքների հատկացումը մասնակի փակ գերեզմանատներում:

5. Գոյություն ունեցող գերեզմանին կից վճարովի հողատարածքի հատկացումը չպետք է խախտի գերեզմանատան հողերի օգտագործման հատակագիծը (սխեման) և խոչընդոտի հարևան գերեզմանների ու անցումների օգտագործումը:

6. Բաց կամ նոր կազմավորվող գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծում (սխեմայում), ելնելով տեղական պայմաններից, կարող են նախատեսվել առանձին հատվածներ (ծառուղիներ)՝ ընտանեկան գերեզմանների կազմավորման համար, ներառյալ վճարովի հողատարածքները:

7. Գերեզմանատան տնօրինությունը վճարովի տարածքը հատկացնում է հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի դիմումի և մահացածի ընտանիքի անդամների կազմի մասին համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

8. Վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի արժեքը որոշում է համայնքի ղեկավարը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը)՝ օրենքով սահմանված կարգով, ըստ տվյալ գոտու համար

սահմանված տարածազնահատման գոտիականության գործակիցների:

9. Հատկացված հողատարածքի արժեքը վճարվում է համայնքի բյուջե (Երևանում՝ Երևանի քաղաքապետարան), կատարված վճարման դիմաց տրվում է անդորրագիր: Ստացված միջոցներն օգտագործվում են գերեզմանատների պահպանման ու շահագործման համար:

10. Գերեզմանատան տնօրինությունը վճարման անդորրագրի հիման վրա համապատասխան նշում է կատարում գերեզմանատան հողերի օգտագործման հատակագծում (սխեմայում) և գրանցում գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառման ու թաղումների գրանցման մատյանում և գերեզմանի վկայականում:

11. Գերեզմանատան տնօրինության ներկայացուցիչը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի հետ տեղում նախանշում է վճարովի հողատարածքի տեղը, չափերը և սահմանաայուններով նշում գերեզմանի սահմանները:

(հավելվածը խմբ., լրաց, փոփ. 11.02.16 N 244-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովույան

Հավելված N 8
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՎԵՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են վերահուղարկավորման հետ կապված գործընթացները:
2. Մահացածի հարազատների ցանկությամբ՝ մահացածի վերահուղարկավորումը (գերեզմանից այլ գերեզման տեղափոխելը) իրականացվում է թաղումից առնվազն երեք տարի հետո՝ մահացածի հարազատների միջոցների հաշվին:
3. Վերահուղարկավորումը թույլատրում է գերեզմանատան տնօրինությունը՝ մահացածի հարազատի դիմումի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի տարածքային մարմնի կողմից տրված վերահուղարկավորում իրականացնելու հնարավորության վերաբերյալ եզրակացության հիման վրա:
Մահացածի հարազատն այլ բնակավայրի գերեզմանատուն տեղափոխելու դեպքում ներկայացնում է նաև տվյալ բնակավայրի գերեզմանատան տնօրինության թույլտվությունը:
(3-րդ կետը փոփ. 30.11.17 N 1514-Ն)
4. Մահացածի աճյունը (աճյունի մնացորդները) գերեզմանից հանվում է ցերեկային ժամերին, գերեզմանատան տնօրինության ու առողջապահական տեսչական մարմնի տարածքային մարմնի ներկայացուցիչների պարտադիր ներկայությամբ, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության ներկայացուցչի մասնակցությամբ:
(4-րդ կետը փոփ. 30.11.17 N 1514-Ն)
5. Մահացածի աճյունը (աճյունի մնացորդները) գերեզմանից հանելուց հետո գերեզմանատան

տնօրինության կողմից գերեզմանահորն անմիջապես ախտահանվում է, լցվում հողով, և տեղը հարթեցվում է:

6. Հանված աճյունը (աճյունի մնացորդները) փաթաթվում է բամբակյա կտորով և տեղադրվում պոլիէթիլենային պարկի մեջ, որից հետո տեղադրվում է փայտյա արկղի կամ դագաղի մեջ և տեղափոխվում նոր գերեզման: Նոր գերեզմանում թաղելուց առաջ աճյունը (աճյունի մնացորդները) հանվում է պոլիէթիլենային պարկից:

7. Նախկին և նոր գերեզմանների գերեզմանատների տնօրինությունները վերահուղարկավորման մասին գրանցումներ են կատարում թաղումների և գերեզմանատների գրանցման մատյաններում ու գերեզմանների վկայականներում:

8. Գերեզմանատների տեղափոխման դեպքում վերահուղարկավորումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով և այդ դեպքերի համար նախատեսված միջոցների հաշվին:

(հավելվածը փոփ. 30.11.17 N 1514-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան